ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՊԵՏԱԿԱՆ–ԻՐԱՎԱԿԱՆ և ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄՇՏԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ԿՈՂՄԻՑ 2018Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 17-Ի ՆԻՍՏՈՒՄ ՔՆՆԱՐԿՎԱԾ «ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՈՆԵՐԻ և ՀԻՇԱՏԱԿԻ ՕՐԵՐԻ ՄԱՍԻՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (ՓԱՍՏԱԹՂԹԱՅԻՆ ԿՈԴ՝ *Պ-361-28.08.2018-ՊԻՄԻ-011/0*) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

	Առաջարկության (փոփոխության,լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը,որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկը(փոփոխությա, լրացման)	Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը)	Առաջարկը ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
		2	3	4	5
1	**Պատգամավոր՝ Նաիրա Զոհրաբյան**	նախագիծ	Նախագծի 1-ին հոդվածով Երևան քաղաքի տոնը առաջարկվում էր նշել հոկտեմբեր ամսվա երկրորդ շաբաթ օրը: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Երևան քաղաքի տոնը երևանցիների համար սիրված տոն է, և քաղաքում անցկացվող միջոցառումներին լիարժեք մասնակցության համար առավել նպատակահարմար է տոնը նշել կիրակի օր, առաջարկում եմ նախագծում կատարել փոփոխություն, և Երևան քաղաքի օրը օրենքով սահմանել	**Ընդունվել է:** Նախագծում կատարվել է համապատասխան փոփոխություն:	**Առաջարկը ընդունվել է:**

			հոկտեմբեր ամսվա երկրորդ կիրակի օրը: Ըստ այդմ նախագծով առաջարկվում է «Հայաստանի Հանրապետության տոների եւ հիշատակի օրերի մասին» օրենքի 14.1-րդ հոդվածը ուժը կորցրած ճանաչել և Օրենքը լրացնել նոր 14.2-րդ և 14.3-րդ հոդվածներով:		